

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ 2



Փակ Բաժնետիրական Ընկերություն

Թողարկողի ֆիրմային անվանումը և կազմակերպարարական տեսակը

ՀՀ, ք. Երևան 0010, Նալբանդյան 48, հեռ.՝ (+374 10) 59-20-20,

ֆաքս՝ (+374 10) 59 20 64, էլ. փոստ՝ info@amiobank.am,

կայք՝ www.amiobank.am

ԱՄԻՕ ԲԱՆԿ Փակ Բաժնետիրական Ընկերություն

Գլխավոր տեղաբաշխողի անվանումը

ՀՀ, ք. Երևան 0010, Նալբանդյան 48, հեռ.՝ (+374 10) 59-20-20,

ֆաքս՝ (+374 10) 59 20 64, էլ. փոստ՝ info@amiobank.am,

կայք՝ www.amiobank.am

ԱՄՆ դոլարով	
Արժեթղթերի տեսակը	անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային
Արժեթղթերի ձևը	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը	150,000 հատ
Արժեթղթերի անվանական արժեքը	100 ԱՄՆ դոլար
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը	15,000,000 ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային եկամտաբերությունը	Ենթակա են որոշման Բանկի Վարչության կողմից Յուրաքարչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Արժեթղթերի շրջանառության ժամկետը	
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը	Ենթակա են որոշման Բանկի Վարչության կողմից Յուրաքարչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Տեղաբաշխման ձևը	չերաշխավորված
ՀՀ դրամով	
Արժեթղթերի տեսակը	անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային
Արժեթղթերի ձևը	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը	350,000 հատ
Արժեթղթերի անվանական արժեքը	100,000 ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը	35,000,000,000 ՀՀ դրամ
Արժեկտրոնային եկամտաբերությունը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Արժեթղթերի շրջանառության ժամկետը	
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը	Ենթակա են որոշման Բանկի Վարչության կողմից Յուրաքարչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Տեղաբաշխման ձևը	չերաշխավորված

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:



ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	5
Բաժին 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	6
Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ.....	6
Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիր.....	14
Բանկի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ	17
Բանկի աուդիտ իրականացնող անձի մասին համառոտ տեղեկատվություն.....	18
Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն	19
Բանկի պարտատոմսերի հիմնական տվյալները.....	20
Պարտատոմսերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը.....	22
Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները.....	23
Բաժին 3. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	25
Անկախ աուդիտորները.....	25
Ռիսկային գործոններ.....	25
Տեղեկատվություն Բանկի մասին.....	29
Բանկի հիմնադրման երկիրը, մասնաճյուղային ցանցը.....	31
.....	
.....	
.....	
.....	

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Ալֆրեդ Վ.Մոելլի (անուն, ազգանուն)	Խորհրդի նախագահ (պաշտոնը)	 (ստորագրություն)	26-Jul-24 (ամսաթիվ)
Տիգրան Միրզոյան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոնը)	 (ստորագրություն)	26.07.24. (ամսաթիվ)
Քրիստոֆ Մաուխե (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոնը)	 (ստորագրություն)	27/7/24 (ամսաթիվ)
Պատրիկ Սվինթ (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոնը)	 (ստորագրություն)	26-7-24 (ամսաթիվ)
Արիել Դավիդոֆ (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոնը)	 (ստորագրություն)	26/7/24 (ամսաթիվ)

Գևորգ Թառումյան (անուն, ազգանուն)	Վարչության նախագահ (պաշտոնը)	 (ստորագրություն)	 (ամսաթիվ)
Ազամատ Խակոյ (անուն, ազգանուն)	Գլխավոր գործառնական տնօրեն (պաշտոնը)	 (ստորագրություն)	30.07.2024 (ամսաթիվ)
Ռուբեն Մելքոնյան (անուն, ազգանուն)	Գլխավոր ֆինանսական տնօրեն/Գլխավոր հաշվապահ (պաշտոնը)	 (ստորագրություն)	30.07.2024 (ամսաթիվ)
Գրիգոր Պետրոսյան (անուն, ազգանուն)	Ռիսկերի կառավարման և հսկողության գլխավոր տնօրեն (պաշտոնը)	 (ստորագրություն)	30.07.2024 (ամսաթիվ)
Ստորագրությունները վավերացնում եմ՝			
Ռուբեն Մելքոնյան (անուն, ազգանուն)	Վարչության նախագահի Ժ.Ա. (պաշտոնը)	 (ստորագրություն)	30.07.2024 (ամսաթիվ)

Բաժին 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես Ծրագրային ազդագրի ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ծրագրային ազդագրի վրա:

Ամփոփաթերթի կազման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ծրագրային ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ծրագրային ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը փաստաթղթային տարբերակով Բանկի գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային էջում www.amiobank.am:

1. Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ

1.1. Բանկի անվանումը և կապի միջոցները

Բանկի լրիվ ֆիրմային անվանումը

հայերեն՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն

ռուսերեն՝ Закрытое Акционерное Общество “АМИО БАНК”

անգլերեն՝ “AMIO” Closed Joint Stock Company

Բանկի կրճատ ֆիրմային անվանումը

հայերեն՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ

ռուսերեն՝ ЗАО “АМИО БАНК”

անգլերեն՝ “AMIO” CJSC

1.2 Բանկի գրանցման վայրը

Բանկի գրանցման վայրն է՝ ՀՀ, 0010, ք.Երևան, Նալբանդյան 48, գրանցման համարը՝ 40, տրված 10.12.1991թ.: Բանկի գտնվելու վայրն է ՀՀ, 0010, ք.Երևան, Նալբանդյան 48:

1.3 Կապի միջոցները

Հեռախոսահամար՝ (+374 10) 59-20-20, (+374 60) 37-25-00

Էլեկտրոնային փոստ՝ info@amiobank.am

Ինտերնետային կայք-էջ՝ www.amiobank.am

Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Թողարկողին և պարտատոմսերին առնչվող հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի Ակտիվների, պարտավորությունների, կապիտալի և հաշվեկշռի կառավարման ծառայության պետ՝ Մարիաննա Պետրոսյանի հետ, հետևյալ հեռախոսահամարով՝ +374 10 592020 (ներքին հեռ. 215):

1.4 Թողարկողի համառոտ պատմությունը

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն իր գործունեությունն սկսել է 1991 թվականի դեկտեմբերից և այդ ժամանակվանից ի վեր անցել է Հայաստանի տնտեսությանը բնորոշ բոլոր անցումային փուլերը:

Բանկը մինչև 2006 թվականը գործում էր որպես «Հայինվեստբանկ» ՓԲԸ, որը հիմնադրվել էր Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ համաձայն 1994թ-ի դեկտեմբերի 14-ին կնքված հիմնադիր պայմանագրի, որով հանդես էր գալիս որպես «Արմինվեստբանկ» փայտտիրական բանկի իրավահաջորդը, որը հիմնադրվել էր 1991թ-ի սեպտեմբերի 10-ին:

Բանկը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում 1991թ-ի դեկտեմբերի 10-ին և ստացել է բանկային գործունեության թիվ 40 լիցենզիան:

2006թ-ի օգոստոսի 10-ին «Հայինվեստբանկ» ՓԲԸ-ի բաժնետերերի արտահերթ ժողովում միաձայն որոշվեց բանկը վերանվանել «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի:

2009թ-ի մայիսին բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Բանկի կանոնադրական կապիտալը համալրվեց 3,050 մլն դրամով: 2011թ-ի դեկտեմբերի 19-ին՝ համաձայն «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Խորհրդի 16 սեպտեմբերի թիվ 228-Ա որոշման, կապիտալը համալրեց ևս 4,050 մլն դրամով: Այնուհետև, 2014թ-ի մայիսի 15-ին Բանկի Խորհրդի թիվ 164-Ա որոշման համաձայն՝ Բանկի կանոնադրական կապիտալը համալրվեց ևս 5,407.5 մլն դրամով: ԿԲ սահմանաձև նորմատիվային ընդհանուր կապիտալի անհրաժեշտ մակարդակը ապահովելու նպատակով՝ Բանկի Խորհրդի որոշմամբ 2016թ-ի հոկտեմբերի 19-ին Բանկի կանոնադրական կապիտալը համալրվեց ևս 8,467.06 մլն դրամով, իսկ 2019թ-ի օգոստոսի 21-ին Բանկի կանոնադրական կապիտալը համալրվեց ևս 8,635.85 մլն դրամով՝ կազմելով 40,010.41 մլն ՀՀ դրամ: 2021թ. 31 դեկտեմբերի դրությամբ Բանկի միակ բաժնետեր է «ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ» ՍՊԸ-ն, իսկ 2022թ-ի հունվարի 21-ին «ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ» ՍՊԸ-ն բաժնետոմսերի 25%-ը փոխանցվել է «ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ՎՎԿ» ՓԲԸ-ին:

2022թ. մարտի 9-ին Բանկի կանոնադրական կապիտալը համալրվել է 128,002 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 170,092 մլն ՀՀ դրամ:

2023թ. վերջով կանոնադրական կապիտալը նույնն է՝ 170,092 մլն ՀՀ դրամ: Կանոնադրական կապիտալը բաժանված է 206,260 սովորական բաժնետոմսի՝ յուրաքանչյուրը 824,651 դրամ անվանական արժեքով: Բանկը վերաբրենդավորվել և 2023թ.-ի նոյեմբերի 17-ից վերանվանվել է «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ, որը «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ լիիրավ իրավահաջորդն է:

1.5 Բանկի ռազմավարությունը

Բանկի ռազմավարությունն է ավելացնել իր մանրաձախ բանկային մասնաբաժինը շուկայում՝ միաժամանակ պահպանելով ամուր դիրքերը նաև կորպորատիվ հատվածում:

Բանկի առաքելությունն է՝ Թվային նոր տեխնոլոգիաներով և ֆինանսական հասանելի լուծումներով աջակցել մարդկանց կարևոր նախաձեռնություններում՝ հեշտ ու հարմար դարձնելով նրանց կյանքը:

Բանկի տեսլականն է՝ Լինել հոգատար գործընկեր ֆինանսական և հարակից ծառայությունների ոլորտում:

Բանկի արժեքները՝ Մարդակենտրոնություն, ազնվություն, վստահություն, պրոֆեսիոնալիզմ և դինամիզմ ... Այս արժեքները ներկայացնում են մեր գործունեության ողջ փիլիսոփայությունը: Բրենդի ճարտարապետության հիմքում ընկած արժեքներն ամբողջացնում են մեր կերպարը մարդկային հատկանիշների նկարագրության միջոցով:

Բանկի ռազմավարական նպատակն է բարձրացնել բաժնետերերի բարեկեցության մակարդակը՝ բարձրակարգ ապրանքներ և ծառայություններ մատուցելով մեր հասարակությանը:

1.6 Բանկի կանոնադրական կապիտալը

2023թ. վերջով Բանկի կանոնադրական կապիտալը 170,092 մլն ՀՀ դրամ է: Այն բաժանված է 206,260 սովորական բաժնետոմսի՝ յուրաքանչյուրը 824,651 դրամ անվանական արժեքով: 2023թ. 31 դեկտեմբերի դրությամբ Բանկի 75% բաժնետեր է ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ ՍՊԸ-ն, իսկ 25%-ը պատկանում է ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ՎՎԿ ՓԲԸ-ին:

1.7 Բանկի բիզնեսի համառոտ նկարագիրը

«Փոխել իրադրությունը». Սա ավանդական բանկից թվային մանրաձախ բանկի անցում կատարելու թափ է հավաքում և ՀՀ-ում թվային բանկինգի ոլորտում քիչ մրցակիցներ կան, Բանկը նպատակ ունի օգտագործել պահը և փոխել Բանկի

ընկալումը՝ մեծ և հնաոճ բանկից անցում կատարելով դեպի երիտասարդ, թարմ և ժամանակակից թվային բանկ:

Հետևյալ թվային բանկային գործառույթների մատուցումը աննախադեպ փորձ կապահովի Բանկի հաճախորդների համար՝

- **Հաշիվների բացում** հաշված թույլների ընթացքում, անկախ այն հանգամանքից, թե նրանք որտեղ են գտնվում և ինչ սարք են օգտագործում:
- **Peer-to-peer (P2P) վճարումներ (ֆիզիկական անձանց միջև կատարվող վճարումներ)** 24/7/365
- **Ինտուիտիվ վարկային հավելվածներ**, որոնք հաճախորդներին թույլ կտան հեշտությամբ բացել լրացուցիչ հաշիվներ, ձեռք բերել վարկային քարտեր և դիմել վարկերի համար՝ ընդամենը մի քանի հայումով: Բանկը կհետևի դիմումի ընթացքին՝ մինչև վերջ աջակցություն և անհատականացված առաջարկ ապահովելով:
- **Պլանավորված վճարումներ**, ինչպիսիք են ամսական և տարեկան հաշիվները:
- **Անձնական թվային քարտերի կառավարումը** հաճախորդներին ավելի շատ վերահսկողության հնարավորություն կտա իրենց ֆինանսների նկատմամբ: Առցանց ծախսերի սահմանաչափերի սահմանումը և վճարային քարտերի արգելափակումն ընդամենը մի քանի հայումով տալիս է հարմարավետություն և անվտանգության ավելի լավ զգացողություն: Թվային քարտերի կառավարման միջոցով հաճախորդները կարող են կարգավորումները հարմարեցնել իրենց նախասիրություններին՝ համապատասխանեցնելով դրանք իրենց գնման վարքագծին՝ միացնելով կամ անջատելով անհայում NFC (Near Field Communication) տեխնոլոգիան և առցանց վճարումները: Գործարքների մանրամասն պատմությունն՝ ըստ երկրի, սպասարկման կետի և գտնվելու վայրի, օգնում է կանխել խախտումները և վաղ փոխում հայտնաբերել զեղծարարությունները:
- **Հուսալի անվտանգությունը** հաճախորդի համար որոշիչ դեր ունի թվային բանկերի միջև ընտրություն կատարելիս: Ընտրվում է այն բանկը, որն ընկալվում է

որպես ավելի ապահով: Բազմաշերտ կենսաչափական նույնականացումը, տեղադրության վայրի վրա հիմնված անվտանգությունը, կասկածելի գործողությունների մասին ծանուցումները, քարտերի տոկենիզացումը և հնարավոր խարդախությունների հայտնաբերման համակարգերը պարտադիր են ժամանակակից բանկային սպասարկման համար: Թվային բանկի համար, որը ցանկանում է առաջատար լինել, կարևոր է ապահովել բոլոր ծառայությունների անվտանգությունը և ամրապնդել իր դիրքը փողերի լվացման դեմ պայքարում: Բացի այդ, անվտանգության հարցերի վերաբերյալ հանրությանը կրթելը էական նշանակություն կունենա ավելի շատ վստահություն ձեռք բերելու համար, քան մյուսները: Սա կշարունակի մնալ նույնքան կարևոր ուղղություն ապագայում, որքան այսօր:

- Ներհավելվածային հաղորդագրությունների և զգուշացումների միջոցով **ժամանակին ուղարկվող ծանուցումները** հաճախորդներին թույլ են տալիս վերահսկել իրենց ֆինանսական գործունեությունը և իրենց պաշտպանել գումարների խարդախ ելքագրումներից և գործարքներից: Մուտքային և ելքային վճարումների վերաբերյալ իրական ժամանակի ռեժիմում ուղարկվող ծանուցումները, քիչ մնացորդի վերաբերյալ զգուշացումները, օվերդրաֆտից (գերաձախսից) զերծ մնալու և վճարումները սպասարկող կետերի վերաբերյալ ծանուցումները թույլ են տալիս հաճախորդներին տեղյակ լինել իրենց ֆինանսների մասին:

- **Անձնական ֆինանսների կառավարումը (ԱՖԿ)** թույլ կտա Բանկին ակտիվ դեր ունենալ սպառողների ֆինանսական վարքագծի կատարելագործմանն աջակցելու և սպառողների կողմից դրամական հարցերի շուրջ ավելի կշռադատված որոշումներ կայացնելու գործում: ԱՖԿ գործիքներն ու հնարավորությունները թույլ են տալիս հաճախորդներին պլանավորել իրենց ֆինանսները՝ ըստ ծախսերի և խնայողությունների նպատակների: Հստակ տեսագծապատկերների օգնությամբ մշտադիտարկելով շաբաթական և ամսական զարգացումները, հաճախորդները

կարող են ընտրել իրենց եկամտի ավելի մեծ մասը խնայողական կամ կենսաթոշակային հաշիվներին հատկացնելու տարբերակը: Բանկերը, որոնք օգնում են իրենց հաճախորդներին ավելի կշռադատված որոշումներ կայացնել, կարող են ավելի ամրապնդել իրենց հաճախորդների վստահությունը և բարձրացնել նրանց հավատարմությունը:


- **Հավատարմության դիմաց արժեքավոր արտոնություններ.** սա այն միջոցն է, որով Բանկը կարող է պարգևատրել հաճախորդներին կատարված ընտրության համար, օրինակ՝ բացառիկ անդամությունը բանկային համայնքին: Խրախուսական կուպոնները, մաքսային քարտերը, հատուկ առաջարկները, հետվճարները (քեշբեք) և խրախուսական պարգևներն ընդամենը այն ռազմավարություններից են, որոնց վրա կարող ենք հույս դնել՝ տվյալ ապրանքանիշին հավատարմության համար հաճախորդներին պարգևատրելու համար: Գոհ և բավարարված հաճախորդները դառնում են ապրանքանիշի լավագույն դեսպանները:

- **Թվային ապահովագրական փաթեթները,** որոնք տրամադրվում են հաշվի հետ միասին, կբարձրացնեն հաճախորդների գոհունակությունը՝ միաժամանակ եկամուտների նոր հոսքեր ստեղծելով:

1.8 Բանկի կազմակերպական կառուցվածքը

Բանկի կազմակերպական կառուցվածքը հետևյալն է.

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



1.9 Բանկի ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը

Հազար ՀՀ դրամ

	31/12/23	31/12/22	31/12/21
Ակտիվներ, այդ թվում՝	828,535,011	811,036,360	823,133,572
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	737,275,813	706,396,618	757,396,392
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	498,504,670	499,858,657	565,239,862
Բանկերին և ֆինանսական կազմ. տրված վարկեր և փոխատվություններ	12,870,505	4,555,351	3,380,342
Բանկերի թղթակցային հաշիվներ	1,350,000	1,487,428	881,464
Արժեթղթեր	202,776,544	169,780,533	155,484,954
Ռեպո համաձայնագրեր	20,497,929	29,620,814	32,170,007
Այլ եկամտաբեր ակտիվներ	1,276,165	1,093,835	239,763
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	89.0%	87.1%	92.0%

2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիր

Ռիսկերի ճիշտ կանխատեսումը, գնահատումն ու կառավարումը ցանկացած ձեռնարկատիրական գործունեության հաջողության գրավականն է:

Բանկի գործունեության ընթացքում հատկապես կարևորվում է հետևյալ ռիսկերի կառավարումը.

Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Քաղաքական և տնտեսական ռիսկերը կապված են աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական անբարենպաստ փոփոխությունների արդյունքում երկրի մակրոտնտեսական իրավիճակի վատթարացման հետ, մասնավորապես տնտեսական աճի անկման կամ բարձր գնաճի հետ: Դրանք իրենց հերթին կարող են ազդել բանկի վարկային պայուսակի որակի, կամ Բանկի հասույթի վրա:

Մրցակցային ռիսկն առաջանում է բանկային համակարգում առկա մրցակցության պայմաններում և այն կարող է իր ազդեցությունը թողնել Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա:

Օրենսդրական և նորմատիվային ռիսկն օրենսդրական դաշտի փոփոխությունների հնարավոր բացասական ազդեցությունն է Բանկի գործունեության վրա: Բանկային գործունեությունը ՀՀ-ում ամենախիստ վերախսկվող ոլորտն է, իսկ Բազել 3-ի ներդրման արդյունքում կավելանան բանկային ռիսկերի կառավարման նոր սկզբունքներ՝ ավելի նվազեցնելով բանկային համակարգի ռիսկայնությունը:

Վարկային ռիսկը Բանկի ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, փոխառուի կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմի՝ Բանկի հանդեպ ստանձնած պայմանագրային պարտականությունները չկատարելու հետևանքով:

Իրացվելիության ռիսկը կապված է նորմալ կամ սթրեսային իրավիճակներում Բանկի կողմից ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու դժվարությունների հետ: Իրացվելիության ռիսկն առաջանում է Բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում, և այն մեղմելու համար բանկերը կիրառում են տարբեր գործիքներ, ինչպիսիք են օրինակ իրացվելի միջոցների բավարար պաշարի պահպանումը (պարտատոմսերի կամ բարձր իրացվելի այլ ակտիվների տեսքով), հասանելիությունը ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներին, և այլն:

Շուկայական ռիսկն առաջանում է փոխարժեքների, շուկայական տոկոսադրույքների և գների ոչ բարենպաստ փոփոխությունների արդյունքում՝ հանգեցնելով Բանկի ակտիվների արժեքի նվազմանը: Այս ռիսկը նվազեցնելու նպատակով Բանկը սահմանել է շուկայական ռիսկի ախորժակը, ինչպես նաև մի շարք սահմանաչափեր և ցուցանիշներ՝ այն հսկելու և ընդունելի սահմաններում պահպանելու նպատակով:

Գործառնական ռիսկը Բանկի գործունեության ընթացքում կորստի ռիսկն է, որն առաջանում է անհամապատասխան կամ ձախողված ներքին գործընթացներից, մարդկանց և համակարգերի կամ արտաքին գործոնների պատճառով:

Բանկին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագրությանը ներդրողը կարող է ծանոթանալ սույն ազդագրի Բաժին 3-ի երկրորդ կետում:

Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Ինչպես ցանկացած ներդրում, այնպես էլ պարտատոմսերում իրականացվող ներդրումն իր մեջ պարունակում է որոշակի ռիսկային գործոններ:

Տոկոսադրույքի ռիսկը տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների արդյունքում պարտատոմսի գնի տատանման արդյունքում հնարավոր կորուստների ռիսկն է: Տոկոսադրույքները և պարտատոմսերի գներն իրար հետ ունեն հակադարձ կախվածություն, այն է՝ պարտատոմսերի շուկայում տոկոսադրույքների բարձրացումը ենթադրում է պարտատոմսի գնի նվազում, և հակառակը, ինչի արդյունքում ներդրողը կարող է չստանալ նախատեսվող շահույթը, կամ անգամ վնաս կրել: Նշված ռիսկը, սակայն, էական է, երբ նախատեսվում է պարտատոմսերի վաճառք մինչև դրանց մարվելը:

Իրացվելիության ռիսկը պարտատոմսերը երկրորդային շուկայում վաճառելու հետ կապված հնարավոր խնդիրներն են՝ կախված արժեթղթերի շուկայում առկա իրավիճակից: Բանկը պարտատոմսերի իրացվելիության ապահովման համար ձեռնարկելու է համապատասխան միջոցներ, այդ թվում՝ շուկա ստեղծողի հետ պայմանագրի կնքում, սակայն իրացվելիության ռիսկն այնուամենայնիվ կարող է ի հայտ գալ:

Արտարժույթային ռիսկն առաջանում է ազգային արժույթի փոխարժեքի տատանումների հետևանքով և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի՝ պարտատոմսերից ստացվող եկամուտների վրա: Կախված այն բանից,

թե ինչպիսի նպատակով է կատարվում ներդրումը, հետագայում դրանք ՀՀ դրամի կամ այլ արժույթի փոխարկելիս հնարավոր են կորուստներ:

Պարտատոմսերին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագրությանը ներդրողը կարող է ծանոթանալ սույն ազդագրի Բաժին 2-ի առաջին կետում:

3. Բանկի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ

Բանկի գործունեությունը մշտապես գտնվում է Բանկի խորհրդի, Գործադիր մարմնի ուշադրության ներքո և իրականացվում է համաձայն Բանկի խորհրդի կողմից հաստատված «Հեռանկարային զարգացման ծրագրի», ինչը հնարավորություն է տալիս օպերատիվ կերպով արձագանքել շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Բանկի գործունեությունը շուկայի պահանջներին, ինչպես նաև նվազագույնի հասցնել մի շարք ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը: 2023թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պարտավորությունները կազմել են 672.286 մլն դրամ: Պարտավորությունների ամենախոշոր տարրը ներգրավված ժամկետային ավանդներն են՝ 49.8%: Վերջինս նախորդ տարվա համեմատ աճել է 4.7%-ով և կազմել 334,558 մլն դրամ: Ցպահանջ միջոցները կազմել են ընդհանուր պարտավորությունների 24.1%-ը՝ կազմելով 161,840 մլն դրամ: Նախորդ տարեվերջի համեմատ ցուցանիշն աճել է 13.2%-ով: Վերջինս պայմանավորված է իրավաբանական անձանց հաշիվների մնացորդների աճով: Պարտավորությունների հաջորդ խոշոր տարրը ՀՀ ԿԲ-ի հետ ռեպո համաձայնագրերն են: Վերջիններս կազմել են պարտավորությունների 11.5%-ը կամ 77,000 մլն դրամ: 2023թ. ընթացքում Բանկի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված ավանդների տոկոսադրույքները տատանվել են 1.0-10.25%-ի սահմաններում (կախված ավանդների արժույթից և ժամկետայնությունից): 31.12.2023թ. դրությամբ Բանկի զուտ շահույթը կազմել է 1,542 մլն ՀՀ դրամ: Տոկոսային եկամուտները նախորդ տարվա համեմատ նվազել են են 52.5%-ով և

կազմել 63,924 մլն դրամ: Ոչ տոկոսային եկամուտները տարեվերջին կազմել են 10,354 մլն դրամ: Ոչ տոկոսային ծախսերը նվազել են 59.5%-ով՝ կազմելով 27,307 մլն դրամ: Բանկի ընդհանուր ակտիվները դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 828,535 մլն ՀՀ դրամ: Ընդհանուր ակտիվների 60.2%-ը կամ 498,505 մլն դրամ կազմել են Բանկի՝ հաճախորդներին տրվող ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկային ներդրումները և փոխառությունները: Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում հոդվածը ընդհանուր ակտիվներում տարեվերջի դրությամբ ունի 6.6% տեսակարար կշիռ: Նախորդ տարվա համեմատ հոդվածը նվազել է 72.7%-ով: Արժեթղթերի պորտֆելը կազմել է ակտիվների 24.5%-ը՝ կազմելով 202,730 մլն ՀՀ դրամ:

4. Բանկի աուդիտ իրականացնող անձի մասին համառոտ տեղեկատվություն

Բանկի 2011թ. անկախ աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, 2012թ.՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն, 2013թ., 2014թ., 2015թ., 2016թ., 2017թ. և 2018թ.՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն: Բանկի 2019թ., 2020թ., 2021թ., 2022թ., 2023թ. անկախ աուդիտը ևս իրականացրել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0015, Գրիգոր Լուսավորիչ 9, Երևան Պլազա Բիզնես Կենտրոն հեռ. (+ 374 10) 500 964, ֆաքս՝ (374 10) 500 961, www.grantthornton.am

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հասցեն է՝
ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության 22, հեռ. (+ 374 10) 544 301, (+ 374 10) 544 307, (+ 374 10) 544 309 ֆաքս՝ +374 10 562 404, www.bakertilly.am

5. Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները՝

- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը /այսուհետ՝ Ժողով/,
- Բանկի խորհուրդը /այսուհետ՝ Խորհուրդ/,
- Բանկի գործադիր մարմինները՝ Բանկի վարչության նախագահը (այսուհետ՝ Վարչության նախագահ) և Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

5.1 Բանկի բաժնետերերն են՝

- «ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ» ԲԸ - 154,694 (74.999515%) ձայնի իրավունք տվող բաժնետոմսերով
- «Բնակարան Երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ - 51,566 (25.000485%) ձայնի իրավունք տվող բաժնետոմսերով

Բանկի խորհուրդը կազմված է հիևոց անդամներից՝

	Անուն, ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1	Ալֆրեդ Վալտեր Մոելլի	Խորհրդի նախագահ	47 տարի
2	Քրիստոֆ Մաուխլե	Խորհրդի անդամ	38 տարի
3	Պատրիկ Ջոզեֆ Սվինթ	Խորհրդի անդամ	28 տարի
4	Արիել Սերջիո Դավիդոֆֆ	Խորհրդի անդամ	41 տարի
5	Տիգրան Միրզոյան	Խորհրդի անդամ	30 տարի

Բանկի խորհրդին կից կոմիտեներ՝

- Ռիսկերի կոմիտե,
- Աուդիտի կոմիտե,
- Նշանակումների և փոխհատուցումների կոմիտե:

Բանկի վարչությունը կազմված է 4 անդամներից՝

	Անուն, ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1	Գևորգ Թառումյան	Վարչության նախագահ	34 տարի
2	Ազամատ Խակոյ	Գլխավոր Գործառնական Տնօրեն	36 տարի
3	Գրիգոր Պետրոսյան	Ռիսկերի կառավարման և հսկողության Գլխավոր Տնօրեն	14 տարի
4	Ռուբեն Մելքոնյան	Գլխավոր Ֆինանսական տնօրեն/Գլխավոր Հաշվապահ	22 տարի

Բանկի վարչությանը կից կոմիտեներ՝

- Վարային կոմիտե,
- Խնդրահարույց ակտիվների կոմիտե,
- Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտե,
- Կարգապահական կոմիտե,
- Հաճախորդների սպասարկման կոմիտե:

Բանկի աշխատակիցների թիվը 31.12.2023թ-ի դրությամբ կազմում է 983 աշխատակից:

6. Բանկի պարտատոմսերի հիմնական տվյալները

Բանկն այս պահին շրջանառության մեջ ունի պարտատոմսերի 1 թողարկում՝ 17 մլն ԱՄՆ դոլար անվանական ծավալով (170 000 հատ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով): Պարտատոմսերն ցուցակված չեն Հայաստանի Ֆոնդային Բորսայում: Պարտատոմսերի մարման ամսաթիվն է 30.10.2026թ.:

Սույն Ծրագրային ազդագրով առաջարկվելու են անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային արտարժույթային և դրամային պարտատոմսեր:

Արտարժույթային պարտատոմսերը տեղաբաշխվելու և մարվելու են ԱՄՆ դոլարով և դրանց դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվելու են ԱՄՆ դոլարով: Թողարկման (առաջարկի) ծրագրային ծավալը կազմելու է 15,000,000.00

(տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար: Մեկ պարտատոմսի անվանական արժեքն է 100 ԱՄՆ դոլար, թողարկվող պարտատոմսերի քանակը՝ 150,000 հատ: Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման ծավալը, արժեկտրոնային եկամտաբերությունը, պարտատոմսերի շրջանառության ժամկետը, արժեկտրոնների վճարման պարբերականությունը, տեղաբաշխման ժամկետը ենթակա են որոշման Թողարկողի Վարչության կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Եթե արժեկտրոնի վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Պրամային պարտատոմսերը տեղաբաշխվելու և մարվելու են ՀՀ դրամով և դրանց դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվելու են ՀՀ դրամով: Թողարկման (առաջարկի) ծրագրային ծավալը կազմելու է 35,000,000,000.00 (երեսունհինգ միլիարդ) ՀՀ դրամ: Մեկ պարտատոմսի անվանական արժեքն է 100,000 ՀՀ դրամ, թողարկվող պարտատոմսերի քանակը՝ 350,000 հատ: Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման ծավալը, արժեկտրոնային եկամտաբերությունը, պարտատոմսերի շրջանառության ժամկետը, արժեկտրոնների վճարման պարբերականությունը, տեղաբաշխման ժամկետը ենթակա են որոշման Թողարկողի Վարչության կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Եթե արժեկտրոնի վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակ է հանդիսանում շուկայից միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Վարչության կողմից տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում յուրաքանչյուր թողարկման տեղաբաշխումից առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ Բանկի www.amiobank.am ինտերնետային կայք-էջում:

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն համապատասխան պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը, պատշաճ կերպով ներկայացնեն Բանկ և կատարեն համապատասխան վճարում, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելը:

7. Պարտատոմսերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն համապատասխան պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը, պատշաճ կերպով ներկայացնեն Բանկ և կատարեն համապատասխան վճարում, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելը:

Յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ավարտից հետո Բանկը նախատեսում է դիմել «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ կարգավորվող շուկայում պարտատոմսերը ցուցակելու և առևտրին թույլատրելու նպատակով և պարտատոմսերի իրացվելիության բարձրացման նպատակով արժեթղթերի շուկայի մասնակիցներից մեկի հետ կնքել շուկա ստեղծողի պայմանագիր: Բանկը կարող է դիմել նաև արտասահմանում գործող ֆոնդային բորսա՝ պարտատոմսերի կրկնակի

ցուցական համար: Պարտատոմսերի ցուցական դիմումը կարող է նաև չբավարարվել:

8. Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 2-ում:

<i>Ցուցանիշի անվանումը</i>	31/12/23	31/12/22	31/12/21
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	1,542,408	-2,135,810	-20,008,103
Սեփական կապիտալի միջին մեծություն	154,087,731	87,273,403	34,207,958
<i>Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)%</i>	1.00%	-2.45%	-58.49%
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	1,542,408	-2,135,810	-20,008,103
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	819,785,686	817,084,966	835,464,658
<i>Ակտիվների շահութաբերություն (ROA)%</i>	0.19%	-0.26%	-2.39%
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	1,542,408	-2,135,810	-20,008,103
Գործառնական եկամուտ	19,435,066	80,409,406	26,182,723
<i>Զուտ շահույթի մարժա (NPM) %</i>	7.94%	-2.66%	-76.42%
Գործառնական եկամուտ	19,435,066	80,409,406	26,182,723
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	819,785,686	817,084,966	835,464,658
<i>Ակտիվների օգտագործման գործակից % (AU)</i>	2.37%	9.84%	3.13%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	819,785,686	817,084,966	835,464,658

Ցուցանիշի անվանումը	31/12/23	31/12/22	31/12/21
Սեփական կապիտալի միջին մեծություն	154,087,731	87,273,403	34,207,958
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	5.32	9.36	24.42
Զուտ տոկոսային եկամուտ	10,438,702	85,147,226	15,453,427
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	698,243,116	647,757,484	743,924,269
Զուտ տոկոսային մարժա %(NIM)	1.49%	13.1%	2.1%
Տոկոսային եկամուտ	63,923,671	134,564,488	59,502,623
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	698,243,116	647,757,484	743,924,269
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	9.15%	20.77%	8.00%
Տոկոսային ծախսեր	53,484,969	49,417,262	44,049,196
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	662,050,252	640,543,847	794,121,468
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են ծախսեր, %	8.08%	7.71%	5.55%
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	1,542,408	-2,135,810	-20,008,103
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը (հատ)	206,260	206,260	51,040
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	7.48	(10.35)	(392.01)
ՍՊԻԵԴ, %	1.1%	13.1%	2.5%

Բաժին 3. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Անկախ աուդիտորները

Բանկի 2011թ. անկախ աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, 2012թ.՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն, 2013թ., 2014թ., 2015թ., 2016թ., 2017թ. և 2018թ.՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն: Բանկի 2019թ., 2020թ., 2021թ., 2022թ., 2023թ. անկախ աուդիտը ևս իրականացրել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0015, Գրիգոր Լուսավորիչ 9, Երևան Պլազա Բիզնես Կենտրոն հեռ. (+ 374 10) 500 964, ֆաքս՝ (+ 374 10) 500 961, www.grantthornton.am

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հասցեն է՝
ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության 22, հեռ. (+ 374 10) 544 301, (+ 374 10) 544 307, (+ 374 10) 544 309 ֆաքս՝ +374 10 562 404, www.bakertilly.am

Ռիսկային գործոններ

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Բանկի առաքելությանը, ռազմավարական ու միջանկյալ նպատակներին համահունչ և ուղղված է Բանկի ֆինանսական կայունության ապահովմանն ու հեղինակության ամրապնդմանը:

Բանկը հատկապես կարևորում է ներքոնշյալ ռիսկերի կառավարումը, սակայն ներդրողը պետք է գիտակցի, որ նշված ռիսկերից բացի հնարավոր են նաև այլ ոչ բարենպաստ դեպքերի զարգացումներ, որոնք հետագայում կարող են անցանկանալի հետևանք ունենալ Բանկի ֆինանսական վիճակի, արդյունքների, **հեղինակության վրա, ինչպես նաև պարտատոմսերի ներդրումային որակների վրա:**

Վարկային ռիսկը Բանկի ֆինանսական վնաս կրելու ռիսկն է փոխառուի կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմի՝ Բանկի հանդեպ ստանձնած պայմանագրային պարտականությունները չկատարելու հետևանքով: Վարկային ռիսկը Բանկում տարանջատվում է երկու խմբի՝ վարկառուի ռիսկ, պորտֆելային ռիսկ: Վարկային ռիսկերի կառավարման գլխավոր խնդիրը բանկի համար

հանդիսանում է վարկային ռիսկերի ժամանակին բացահայտումը, գնահատումը և դրանց նվազեցման ուղղությամբ համապատասխան քայլերի իրականացումը: Բանկի կողմից մշակված համապատասխան մեթոդաբանության համաձայն՝ նախքան վարկի տրամադրումը, գնահատվում է պոտենցիալ վարկառուի վարկունակությունը: Վարկային ռիսկի կանխարգելման տեսանկյունից վարկավորման ժամանակ էապես կարևորվում է այնպիսի սկզբունքների պահպանումը, ինչպիսիք են վարկի ապահովվածությունն ու նպատակայնությունը: Վարկի տրամադրումից հետո, վարկային պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում, Բանկի կողմից իրականացվում է վարկի մոնիթորինգ՝ վարկառուի վճարունակությունը և վարկի ապահովվածությունը պարբերաբար գնահատելու և հնարավոր վարկային ռիսկի զսպման ուղղությամբ համապատասխան քայլեր ձեռնարկելու նպատակով:

Պարբերաբար վերլուծության է ենթարկվում նաև Բանկի ընդհանուր վարկային պորտֆելը՝ ըստ տնտեսության ճյուղերի, հաճախորդների և վարկատեսակների, պորտֆելի դիվերսիֆիկացիան և որակն ապահովելու նպատակով: Բանկի Խորհրդի կողմից հաստատված համապատասխան ներքին իրավական ակտով սահմանված են վարկային ռիսկը զսպող ներբանկային նորմատիվներ (տնտեսության մեկ ճյուղի գծով ռիսկի առավելագույն չափի, վարկային ընդհանուր ռիսկի առավելագույն չափի, վարկային պորտֆելի որակի ռիսկի առավելագույն չափի, վարկային պորտֆելի որակի ռիսկի առավելագույն չափի՝ ըստ առանձին վարկատեսակների, մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի, խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի, Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի, Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի և այլն):

Ստորև ներկայացված է 31.12.2023թ. դրությամբ Բանկի կողմից տրամադրված վարկերի և փոխառվածությունների պորտֆելի որակն՝ ըստ առանձին վարկավորման ոլորտների:

հազ. ՀՀ դրամ

<i>Ակտիվներ</i>	<i>Աշխատող ակտիվներ</i>	<i>Չաշխատող ակտիվներ</i>
1. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	5,450,280	1,667,923
2. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	16,704,295	227,714
3. Մշակող արդյունաբերություն	12,711,261	9,439,111
4. Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	13,135,286	-
5. Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	1,282	-
6. Շինարարություն	66,908,426	8,607,871
7. Առևտուր	91,893,131	30,018,800
8. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	4,873,297	-
9. Կեցության և հանրային սննդի կազմակերպում	13,546,390	8,098,330
10. Տեղեկատվություն և կապ	3,596,228	-
11. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	650	-
12. Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	21,533,758	1,476
13. Կրթություն	2,034,613	82,554
14. Առողջապահություն	332,601	-
15. Մշակույթ, զվարճություն, հանգիստ	5,255,159	-
16. Տնտեսության այլ ճյուղեր	64,358,123	3,581,307
17. Հիպոթեկային վարկեր	91,912,645	1,112,606
18. Սպառողական և այլ վարկեր	18,666,632	2,752,922

Իրացվելիության ռիսկը պայմանավորված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Իրացվելիության ռիսկն առաջանում է Բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Բանկում իրացվելիության կառավարման նպատակն է՝ ստեղծել այնպիսի ֆինանսական կարողությունների ամբողջություն, որը հնարավորություն կտա առանց լուրջ խնդիրների բավարարելու բոլոր տեսակի կրեդիտորների, ավանդատուների և այլ հաճախորդների օրինական դրամական պահանջները, որոնք կարող են արտացոլված լինել Բանկի հաշվեկշռային և հետհաշվեկշռային հոդվածներում, ինչպես նաև ապահովել շահութաբերության հնարավոր առավելագույն մակարդակ:

Գործառնական ռիսկը Բանկի գործունեության ընթացքում կորստի ռիսկն է, որն առաջացել է անբավարար կամ ձախողված ներքին գործարար-գործընթացների, համակարգերի, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների արդյունքում: Գործառնական ռիսկը ներառում է նաև իրավական, տեղեկատվական տեխնոլոգիաների և հեղինակության ռիսկերը:

Բանկում գործառնական ռիսկերի կառավարման նպատակով աշխատանքային գործընթացներում, գործառնություններում և գործառույթներում ներդրված են ներքին հսկողության համապատասխան մեխանիզմներ:

Շուկայական ռիսկն առաջանում է արժույթների փոխարժեքների, շուկայական տոկոսադրույքների և գների ոչ բարենպաստ փոփոխությունների արդյունքում:

Բանկում **արտարժույթային ռիսկը** գնահատվում է միջազգային պրակտիկայում ընդունված VaR (Value at Risk) մոդելով, որը որոշակի հավանականությամբ կանխատեսում է արտարժույթի՝ ապագայում սպասվող առավելագույն տատանման մակարդակը՝ հաշվարկելով Բանկի հավանական կորստի առավելագույն մեծությունը: Արտարժույթային ռիսկի զսպման նպատակով Բանկում իրականացվում

է արտարժութեային դիրքերի ամենօրյա մոնիթորինգ: Իսկ արտարժութեային բաց դիրքերի առկայության դեպքում՝ հնարավոր կորուստներից խուսափելու նպատակով կիրառվում են հեջավորման գործիքներ:

Բանկում **տոկոսադրույքի ռիսկի** կառավարման խնդիրն է՝ պահպանել ակտիվների ու պարտավորությունների տոկոսադրույքների սպրեդի և զուտ տոկոսային մարժայի ընդունելի մակարդակներ: Տոկոսադրույքի ռիսկի զսպման նպատակով Բանկում գործում են ակտիվների և պարտավորությունների գնագոյացման (տոկոսադրույքների սահմանման) հատուկ մշակված մեխանիզմներ:

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում՝ ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում, հնարավոր կորուստների գնահատում ամսական կտրվածքով կիրառվող սթրես թեստերի միջոցով, ֆինանսական գործիքների գծով սահմանաչափերի սահմանում:

Մրցակցային ռիսկն առաջանում է բանկային համակարգում առկա մրցակցության պայմաններում և կարող է իր ազդեցությունը թողնել Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա: Մրցակցային ռիսկի կառավարումը Բանկում իրականացվում է բիզնես ստորաբաժանումների և Մարքեթինգային հետազոտությունների բաժնի կողմից՝ պարբերաբար իրականացվող Բանկի և այլ բանկերի կողմից առաջարկվող ծառայությունների տեսականու և պայմանների համեմատության միջոցով:

Այլ ռիսկեր. վերը նշված ռիսկերից բացի այլ ռիսկեր, ինչպես օրինակ՝ քաղաքական, օրենսդրական և այլն:

2. Տեղեկատվություն Բանկի մասին

2.1. Բանկի ֆիրմային անվանումը

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն

ռուսերեն՝ Закрытое Акционерное Общество “АМИО БАНК”

անգլերեն՝ “AMIO BANK” Closed Joint Stock Company

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ

ռուսերեն՝ ЗАО “АМИО БАНК”

անգլերեն՝ “AMIO BANK” CJSC

Բանկը հիմնադրվել է որպես «Արմինվեստբանկ» փայատիրական բանկ, 1994թ. վերակազմավորվել է որպես «Հայինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերություն, իսկ 2006թ.՝ վերանվանվել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի: Բանկը վերաբրենդավորվել և 2023թ.-ի նոյեմբերի 17-ից վերանվանվել է «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ, որը «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ լիիրավ իրավահաջորդն է:

Բանկի ապրանքանիշը ներկայացված է ստորև:



2.2. Բանկի գրանցման վայրը և պետական գրանցման համարը

Բանկի գրանցման վայրն է՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան 48, գրանցման համարը՝ 40:

2.3. Բանկի ստեղծման ամսաթիվը

Բանկը փաստացի գործունեությունը սկսել է իրականացնել 1991 թվականի դեկտեմբերից, մինչ օրս՝ շուրջ 33 տարի:

3.4 Բանկի գտնվելու վայրը.

ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան 48:

3.5 Կապի միջոցները

Հեռախոսահամարներ՝ (+374 10) 59-20-20, (+374 60) 37-25-00

Էլեկտրոնային փոստ՝ info@amiobank.am

Ինտերնետային կայք-էջ՝ www.amiobank.am

3.6 Բանկի հիմնադրման երկիրը, մասնաճյուղային ցանցը

Բանկի հիմնադրման երկիրը Հայաստանի Հանրապետությունն է:

2023թ. ընթացքում իր նոր թվային ռազմավարության շրջանակներում մասնաճյուղային ցանցի 35% օպտիմալացման արդյունքում՝ Բանկը ներկայումս ունի 35 մասնաճյուղ, որոնցից 19-ը գտնվում են ք. Երևանում, 16-ը՝ ՀՀ մարզերում: Բանկի Գլխամասային գրասենյակը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48 հասցեում: Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում են մասնաճյուղերի գործունեության հասցեները:

	Մասնաճյուղ	Հասցե
1.	Նալբանդյան սպասարկման կենտրոն	ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48
2.	Կենտրոն	ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 20
3.	Շենգավիթ	ՀՀ, ք. Երևան, Գ. Նժդեհի 31/36
4.	Արցախ	ՀՀ, ք. Երևան, Էրեբունի 23 շենք, 73 և 74 շինություն
5.	Էրեբունի	ՀՀ, ք. Երևան, Տիտոգրադյան փողոց 1/4
6.	Մալաթիա	ՀՀ, ք. Երևան, Արա Սարգսյան 19
7.	Նոր-Նորք	ՀՀ, ք. Երևան, Թոթովենցի 4 նրբանցք
8.	Սեբաստիա	ՀՀ, ք. Երևան, Րաֆֆու փող., 77 շենք, շինություն 60
9.	Քանաքեռ	ՀՀ, ք. Երևան, Զ. Սարկավազի փող., թիվ 72/9
10.	Վանաձոր	ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծ 44

11.	Արմավիր	ՀՀ, ք. Արմավիր, Հանրապետության 6
12.	Արարատ	ՀՀ, ք. Արարատ, Շահումյան 30/1
13.	Գյումրի	ՀՀ, ք. Գյումրի, Անկախության հրապարակ 8
14.	Ագարակ	ՀՀ, ք. Ագարակ, Գ. Նժդեհի 76
15.	Աբովյան	ՀՀ, ք. Աբովյան, Ռոսիայի փող. թիվ 1/20
16.	Աշտարակ	ՀՀ, ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու փողոց 45-47
17.	Գավառ	ՀՀ, ք. Գավառ, Բունիաթյան 6
18.	Մասիս	ՀՀ, ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ 55
19.	Արթիկ	ՀՀ, ք. Արթիկ, Բաղրամյան փողոց, թիվ 14/10
20.	Կոմիտաս	ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պողոտա 61 շենք, 60-61 շին.
21.	Ալաշկերտ	ՀՀ, ք. Մարտունի, Պողոսյան փողոց 2 շենք, թիվ 17-18
22.	Արտաշատ	ՀՀ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փողոց 107 ¹
23.	Արաբկիր	ՀՀ, ք. Երևան, Ն. Ադոնցի 17 շենք, 58 շինություն
24.	Ավան	ՀՀ, ք. Երևան, Խուդյակով 165/4
25.	Արտաշիսյան	ՀՀ, ք. Երևան, Արտաշիսյան փողոց 84/2
26.	Հրազդան	ՀՀ, ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ., 4-րդ փողոց, թիվ 8 ²
27.	Տերյան	ՀՀ, ք. Երևան, Տերյան 69
28.	Մերգեղյան	ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 1, 274

¹ Օգոստոսի 27-ից Մասնաճյուղը կգործի՝ «ՀՀ, Արարատի մարզ, համայնք Արտաշատ ք., Օգոստոսի 23 փողոց, 107» հասցեում:

² Օգոստոսի 30-ից Մասնաճյուղը կգործի՝ «ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Օգոստոսի 23-ի փողոց 50/1» հասցեում:

29.	Երվանդ Քոչար	ՀՀ, ք. Երևան, Երվանդ Քոչար 24/1
30.	Դավթաշեն	ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն, Տ. Պետրոսյան փողոց, թիվ 1/11
31.	Կապան	ՀՀ, ք. Կապան, Մ. Ստեփանյան փողոց, 3/12
32.	Աջափնյակ	ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ, Բաշինջաղյան փողոց, 165/2
33.	Զվարթնոց	ՀՀ, ք. Երևան, Զվարթնոց օդանավակայան
34.	Կումայրի	ՀՀ, ք. Գյումրի, Թբիլիսյան խճուղի 2/14
35.	Իջևան	ՀՀ, ք. Իջևան, Ա. Մելիքբեկյան փողոց 5/9